

ՍՄՐԱՍ ԲԻՐՈՍ  
Սմբագրութիւն «Փիիւնիկ», Ի  
Աղեքսանդրիա



S. Buzat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ  
Լր. 45  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՄԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆ  
ՎԱՆՆԻԿ Է  
Եռագիր ԵՏ չ'դար-  
ձուիր

# Փ Ի Ի Ն Ի Կ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ  
Յր. 15  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՄԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՂ. 6  
Ազգեր կ'ընդուն-  
ուին մասնաւոր  
պայմաններով

## ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ԶԻՆԳՇԱԲԹԻ, ԿԵՐԱԿԹ տառաւորները

### ԱՅՆԹԱՊԷՆ

Նախընթաց թիւին մէջ մասնաւոր ազգով մը կը խոստանայինք հրատարակել ներկայ թիւով Այնթապէ շահեկան թղթակցութիւն մը ոչ, կ'ըսէինք, յստակ դաշտի ար մը կուտայ կիւիլիոյ այդ կարեւոր քաղքին հայ բնակչութեանը ներկայ վիճակին վրայ ԱՆՍԻԱՍԻԿ ԵԱՄԱԿԸ

Այնթապ, 17/30 Ապրիլ

Հայկական Զարդերու սեւ սարիները տեսանք մեր սարսափով աչքերուն առջեւ մարթաիլը մեր հայրերուն, անարգուիլը մեր կիներուն ու քոյրերուն, թալուիլը մեր ինչքերուն, բանտար, ո իլը մենէ ողջ մնացողներուն. շատ բաներ տեսանք, անցուցինք և այսօր դեռ կը տեսնենք նոյն արեւը մեր գլխին վերեւ, նոյն գեանը մեր սուրբին նիւրբեւ, այն սարսափի օրերուն կը կարծէինք թէ ա՛յ պիտի տանչելի չ'ըլլար մեզի, հայերուս համար, այս կեանքը ըստած չարչարանքը. բայց ահա՛ դեռ կ'ապրինք: Ի՞նչ կեանք...:

Գիտեմ, շատ պիտի յուզուիս, եթէ պատմեմ քեզի մերիններուն ամեն օրուան քաշածները, կուտարութիւն կոչուած այս բարբարոս ու կեղեքիչ վարչութեան ձեռքէն, զիտեմ որ պիտի յուզուիս ու լաւ, պիտի ը կրնաս հանդուրդ, սեղեկանալով անվրջանալի մարտիրոսութեա՛ր, որ անխաչափելի ու ճակատագրային դարձած է ասան անձի համար որ հայ ծնած է ու կը կրէ բրիտանացի անունը:

Հեռեւեալ գեղքին համառօտ պատմութիւնը կը բա՛է կարծեմ վեր հանելու մեր տեղական իշխանութեան տխուր ու զրդուելի հոգեբանութիւնը:

Անցածները, տեղիս վարչական ժողովին իճարէ մեծիկսի անպաճեկէն երեւելի ազգային մը, քաղքին մասակայ թրքաբնակ գիւղ մը կ'երթայ ձիով, իր հոն մշակած պիստակեկներուն տարեկան բերքը քաղելու համար:

Կը գիշերէ հոն, բարեկամ թուրք մը տունը:

Առտուն արթննալուն, երբ կը պատրաստուի մեկնելու, չը գտնէր հոն իր ձին, զոր նախորդ իրեկունը կապած էր հիւրընկալ

Թուրքին գրանը քով: Հայեցի նրբամտութեամբ մը կը յաջողի արթընցնել թուրքին ինքնասիրութեան ոգին, ցաւ յայտնելով որ գիւղին մէջ իր պտրկեշտութեամբ ու ազդեցութեամբ ծանօթ թուրքի մը տունէն է որ կը գողցուի բարեկամ ու հիւր Հայու մը ձին. թուրքը շուտով կը կանչէ քանի մը գիւղացիներ, որոնք, ոտքերուն հետքը հաշածելով, կը յաջողին գտնել ի վերջոյ տեղը, ուր ասորած պահած էին ձին: Գողը կը ներկայանայ, կը խոստանայ գտնել ու տիրոջը յանձնել ձին պարգևի մը փոխարէն: Հայը, փոխանակ կարճ կապելով նորէն տիրանալու իր գողցուած ձիուն, վստահելով լսի իր գիւղին ու կարեւոր պաշտօնին, պարգև ու գող թուրքը կ'ամբաստանէ կառավարութեան Դուռը: Իբրև իր ձիուն խկական գողը, և կը յաջողի անոր ձեռակալման հրամանը ձեռք բերել: Սակայն ձերբակալուած ամբաստանեալը, քաղաք բերուելու պտհուն, իր ընկերներէն եօթը հոգի վճար կ'ելլեն ճամբան ու կը փախցնեն: Մէկ երկու օր յետոյ բողոքարկու Հայուն գէմ թրքարնակ գիւղէն հանրագրութիւն մը կը ներկայուի Այնթապի գայմազամին, ծանր ամբաստանութիւններ վերագրելով բողոքարկու Հայուն ու պահանջելով անոր պատժուիլը: Այսպէս, Հայը, քիչ մ'իւր գիւղին, քիչ մըն ալ քանի տասնեակ ոսկիներու բարեխօսութեամբը հաղիւ կը յաջողէ ազատել օձիքը, վրայ տալով նաեւ իր ձին: Բայց, Հայը չուզեր կամ չը կրնար մարտել այոքան վրան բաց անիրաւութիւն մը, ալ ու կը ստուգէ թէ գիւղացիներուն կնիքներովը ծածկուած ծանօթ հանրագրութիւնը պատրաստել տուողն է նոյնինքն Այնթապի ժանտարմայութեան հարիւրագետը, օր մը կը սպառնայ այս վերջինին թէ ինք, Հայկապի մէջ ունենալով ուժ ու նեցուկ, պիտի կարենայ լուծել իր վրէժը, թուրք հարիւրագետը, վախէն, կը խոստանայ գտնել ու տիրոջը վարձնել տալ գողցուած, ձին քանի մ'օրէն կը գործադրէ իր խոստումը, կը բերէ տիրոջը կը յանձնէ

գողցուած ձին, որ սակայն, ա'լ տառջուանը չէ, ուժ ինկած, սակորները ցցուած, քիչ ատենէն իր նախահայրերուն քով կերթայ հանգչելու:

Չը մտնամ ըսել թէ այլ ձին, տասնը չորս ոսկիի գնուած, յետոյ գողցուած, բառասուն ոսկիի մաշ եղաւ Հայուն վրայ, հաշուելով կլորիկ գումարը, զոր ստիպուեցաւ կաշառք տալ ազատելու համար բանաւէն իր օձիքը:

Ն. Կ. Վեհափառութեան համբաւուոր արդարասիրութեանն ու զեպ ի հայերը սընուցած մասնաւոր զգացումներուն շնորհիւ, առանկ փորձանքներ պակաս չ'են մեր զըլխէն. օր չ'անցնիր որ Հայ մը տուգանքի կամ բանտարկութեան, երբեմն ալ աքսորի չը պատապարտուի, իր ինչքին, իր պատիւին ու իր կեանքին վրայ փորձուած ոճրագործութեան մը զեմ բողոք բարձրացուցած ըլլալու յայտնի ու աննկելի յանցանքովս:

Այսպէս կը կառավարուինք հիմայ մենք, մեր քաղքին հիմախուան կացութեանը մասին կրնանք առանց խղճահարութեան գործածել Անդրոբոյնի մը կլաստեալ է բանաձեւը, պոլոսկան ու նահանգային թերթերուն պաշտօնական զեկոյցներուն մէջ հրատարակուած սովորական բանաձեւը, որ Սարսափի Երջանին այս կամ այն նահանգի ու այս կամ այն գաւառի հայ բնակչութեան վրայ գործուած խժգժութեան հետ ուղիղ կը համեմատէր. այլ բանաձեւը կը թուի թէ նորէն պիտի ոկսին հրատարակել մեր խեղճ Այնթապի համար:

Իոկ աուրքերը, մի' հարցնէք: Արտասահման ապստամտող Հայու մը պիտահարիլը (պէտէլաթը ասքէրիյէ) կամ ուրիշ մէկ տուրքը վճարել կը տրուի անոր մերձաւոր ու եթէ չ'ունի — հեռաւոր ազգականի մը. այլ գէրազգ ազգականը — սրուն ու արտասահմանցիին միջեւ թերեւս նոր խնամութիւն մ'անգամ կարելի ըլլայ հաստատել, կը պարտաւորուի, նոյն իսկ տանը կահկարասիները

հանուկով անուրից վճարել բացակային աուրքը:

Ո՛չ ընտանեկան այցելութիւններ, ո՛չ երեկոյթ, ո՛չ պտոյտ, ո՛չ երթեւեկ, քաղաքնիս արիւն կը հոտի, վայրկեանէ վայրկեան, սահմանուած գոհերու պէս, կը սպասենք անգութ անակնկալը:

Գնանի մը դիպեր ալ մեր աւետարանական եղբայրներուն կեանքէն, ու վերջացրնեմ:

Ատենէ մի վեր քաղքին մէջ տարօրինակ շարժում մը սկսած է:

Պատուելի Մանասէ Փափազեան քարոզիչը, որ Առտուսյ առածէն ահեղազօր ձայն մ'ունի ու իր ունկնդիր հաւատացեալ ամբօխին հոգիները մաքնիսոյ ձիրք մը խօսելու, գիշերները զուտը կը հաւաքէ Կոնստանտնուպօլիս մը, իր ուզած մարդուն վրայ, իր ուզած վայրկեանին Ս. Հոգին կ'իջեցնէ (՞) շաբաթ չ'անցնիր որ Հոգեգալուստ մը չը տօնուի վերնատան մը մէջ, որ ժամանակակից առաքեալները հաւաքուած կ'ըլան լսելու համար պատուելի Մանասէն, որ ամեն հոգեկան ախտերուն բաւնաւեն հըռչակուած է հիմայ:

Հոգեգալուստներու սարսուռ մըն է կ'անցնի քաղքին վրայէն. հրեղէն լեզուները տեսնողները մինակ հայերը չ'են, թուրքեր ալ գտնուեցան Նոր Սիօնի վերնատան մէջ, Մանասէի քարոզներէն ու հրաշքներէն (՞) յափշտակուած թուրքեր. եղան թուրքեր ալ, պարզ հետաքրքիրներ, որոնք պատուելին ծաղրելու գիտումով գիմեցին Ազօթարանը, բայց հոն մնացին ու չ'ուզեցին դուրս ելլել, առանց ընդունելու Ս. Հոգիին մկրտութիւնը, Քրիստանկութիւնը:

Իսլամութեան սինեքը խախտիլ սկսան, Միւսթրին ու Գուսթին մտակցան, փոփոսցին իրարու, միջոցը գտան կեցնելու պատուելի Մանասէի յախտն արշաւանքը կրօնային աշխարհին մէջ: Մանասէականները մէկիկ մէկիկ բռնեցին, բռնար նետեցին, իրբեւ նոր աւտակէ յեղափոխականներ, արդիւնէ տալին

պիշերային հաւաքոյթները, ամբաստանելով հոն գունդագունդ դիմող ամբոխը, իբր թէ ազօթելու և քարոզ լսելու պատրուակին տակ կայսերական կառավարութեան զէմ ընդհատուածութեան մը յատակագիծը պատրաստելու նպատակովը միայն հոն հաւաքուած ըլլային:

Բայց Մանասէականը յուսահատիլ չ'են գիտեր, Ս. Հոգին ընդունողները, Այնթապը կը թողուն Քիլիս կ'երթան քարոզութեան. հոն ալ իջեցնել կուտան Ս. Հոգին:

Ատեն մը մեր առաքեալները Եանքիներուն երկրէն կուգային. հիմայ, ժամանակը փոխուած է. կ'երեւայ թէ կամաց կամաց Այնթապէ պիտի բռննին մարդարէ, առաքեալ, աւետարանիչ և ուրիշ ծաղիկներ:

ՏԷՏԷ

## ԱԶԳԱՅԻՆ

### ՉԵԹՈՒՆԻ ԲԱՐԵՍԻՐԱՅԸ

Կիրակի օրուան ծանուցուած Լեզհ. ժողովը գումարուեցաւ եկեղեցիի հին շէնքին սրահը, ներկայութեամբ շուրջ հարիւր անդամներու, որոնց մէջ կը տեսնուէին նաեւ տիկիներն ու օրերողներ:

Առժամայէս Դիւանին Ատենապետ ու Ատենազպիր հռչակուեցան Պ. Պ. Յ. Ստասուրեան և Յ. Աղասէր:

Երկայն վիճարանութիւններէ ետքը կանոնադիրը վաւերացուեցաւ ներկաներուն բացարձակ մեծամասնութեամբը, հիմ' բռնելով արձանագրուողներէն միայն վճարող անդամներուն թիւը, որ մինչեւ ցարդ 110ի կը հասնի:

Կանոնադիրը, քիչ ատենէն տպագրուած, պիտի հրատարակ նետուի:

ԲԻՐԱՄԻՏԻ Թատարնին մէջ ամայս 47ի կերտիլն գիշերը տեղի պիտի ունենայ «ԵԿԱՄԻՉԸ» բարոյալից թատերադրութեան ներկայացումը, որ պիտի վերջանայ գեղեցիկ ու խիստ ծիծաղաշարժ կատակերգութեամբ մը:

Միջնարարներուն հայ նուազածուած խումբը, Մաեսքոին առաջնորդութեամբը, պիտի լսեցնէ գեղեցկազոյն կտորները:

Թատերասէր հասարակութեան կողմէն արգէն քանիցո ծափահարուած Պ. Պ. Շաւարշէ և Շիշմանեանէ զատ սոյն ներկայաչման պիտի մտանակցին գերասանուհի Տիկին Պերճիկ և Պ. Սիմոնօֆ, որոնք վերջնապէս մտած են խումբին մէջ: Հետեաբար, հիմակուընէ երաշխատրուած կրնանք համարել կիրակի գիշերուան ներկայացման յաջողութիւնը:

ՎՍԵՄ ԶԱՐԵՆ ՊԷՑ ՍԵՎԱԶԼԸ

— Ն. Բ. ԽՏԻՎՅՐ շնորհած է Տիար Զարեհ Սըվազլըի Պէյութեան սանիյէ ազոբ ատաղսը, որով զինք շատոնց կը սիրէին անուանել իր բարեկամները:

Տեղիս օտար թերթերը հրատարակելով այս գեղեցիկ լուրը, կը յիշեցնեն նորաստեղծ Պէյին մեր Աղբատահնամի Նախագահութեան ու Խորհուրդի անդամակցութեան կրկնակի հանգամանքը:

Ուրեմն, և րոպական թերթերուն կարծիքով, Բարձր. Խտիվը Պէյ կը ստեղծէ Տիար Սվազլըն, ազգ. խորհրդականի ու Աղբատահնամի ատենապետի կրկնակի հանգամանքներուն համար, ինչ որ ճիշդ է:

Իսկ Փիլանիլը խնդակցելով վստմ. Զարեհ Սվազլը Պէյին, խտիվական գնահատման իր առանցքման առիթովը, կը փափաքի որ Նորին Վոեմութիւնը մեր միտ պէյերին տարբերի ալտուհետև իր ազգսգոս ծառայութիւններովը:

Կալիասեան Մշակ յրագիրը կը պատմէ հետեւեալ իրադութիւնը.

Ասլամազօֆ անուն Պայունատըր զիւղացի մը, Արագ Ռ:բբաթ օրը եկեղեցիին դրան առջև իր եօթնամուտ հորագաս գասիլը մօրթեց: Իսկոյն ձերբակալուած, հարցուքըննութեան մէջ գատաւորին յայտարարեց որ ինք հի:անդ եղած ըլլալով, երազին մէջ

Ս. Յովհաննէս երեցած էր իրեն ու զինք տարած էր ձոր մ'որ սեսած էր Աստուած ոտկիէ աթոռի մը վրայ նստած, ու Աստուած իրեն ըսած էր. «Իման, կ'առողջացրնեմ քեզ: Եղայ մը պիտի ունենաս, բայց երբ որ եօթն ամուտ ըլլայ, ինծի պիտի գոհես անի.»

Ասլամազօֆ, բարբովին առողջացած, փորձած էր ազօթներով արձակուել իր ուխտէն. չը յաջողելով, վճոնց զոհել իր զատակը, հրապարակով, եկեղեցիին առջև:

Ժողովարդը շատ գրգուռած է թէ ինչու սուրբ մարդը ձերբակալեցին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

— Կ. Պոլիս. Ս. Գևորգի տօնին օրը, չորեքշաբթի, արինհեզութիւն մը կը գուշակուի: Ամենախիտ հսկողութիւն ի դործ կը արուի Երւազլի, Դրան, գերմանական ու ռուսական դեսպանատանց և Օսմ. Դրամատան վրայ:

Ո՛չ մէկ Պուլկար կը համարձակի Պուլիս մանկը, ընդ ամենը տասը հազար Պուլկար մնացած է:

Սելանիկի զէպերուն վրայ միշտ լոտիւն կը պահուի: Դեսպաններուն հազարուած լուրերն անգամ անկատար են, ըլլայ՝ վճարուելիք տուգանքներուն համար, ըլլայ թուրք զօրքերուն՝ անհասանելու վրայ ի դործ զրած գազանութեանց ու բանութեանց համար: Ոմանք ինը հարիւր մեռեալ կը հաշուեն. թուրքերը, միայն երեսունէն հարիւր մարդ կ'ուզեն ճանչնալ ձերբակալուած երկու կողմէն: Հիւպատոսներուն տեղեկագիրները կը սպասուին ժամէ ժամ:

Սուլթանը բո ոն յո:զո:մ մը կրած է լամանալով Սելանիկի զէպերը. ինք արդէն գուլի մէջ կ'ուզի, Երւազլի վրայ ատնամիթ նետուելու մշտաան վախէն, որ առիթ կ'աճի իր լրատներուն տեղեկաթերներովն ու մակեղո ական հերթին կաղնակերպութեան գործիչներուն սպանալից նամակներովը:

Սուլթանը նախարարներու և զօրապետներու հետ խել մը խորհրդակցութիւններէ ետքը հրատարակեց Սելանիկի մէջ պաշարման վիճակ. հրամայեց յեղափոխները զօգել իբր անիշխանականներ, փոքր Ասիայէ նոր զուեզեր զրկել Մակեդոնիա, և նոյն խի, Ալբանուպոլսոյ նահանգին մէջ բանակը կեդրոնացնել Պոլիարիոյ դէմ:

Սուլթանը շատ անգամներ վախ յայտնեց սր Սելանիկի երոպական նաւատորմիդնութեան զօրքերը յանկարծ ցամաք չը թափին, արդէն Երջալըզի մէջ սիրող կարծիքն է սր անպատճառ պատերազմ հրատարակուի Պաւլկարիոյ դէմ, զէնքով լուծելու համար մակեդոնական կնճիոր, որ խաղաղասիրաբար չը լուծուեր. խի, զիւսանազիտական շըրջանակներուն մէջ, մանաւանդ ոտսական ու ասորիական, զեռ յամառքէն կը փափագուի խաղաղասիրական ճամբով լուծել, ընդհանուր ջարդէ մը կը վախցուի:

—Վիէննա. Եքստրայէ նոր եկող մը կիմացնէ թէ երկու զատաւորները մեռան իրենց վերքերէն: Միւսն ողբ քսան երկու տարեկան ալբանիացի մը, փախած է: Միւս զատաւորները վախեցնուին փախած են վալիին ապարանքին մէջ:

Եքստրայի պահականոցին հրամանատարը բողոքեց իր երկու վաշտերը Բրիդըէն ազրկուելուն դէմ, վախնալով որ թուրք զօրագնդերուն թիւը Եքստրայի մէջ պակսելով լեանցի յեղախումբերը յանկարծ քաղաքը չը խուծեն:

—Մակեդոնիա. Եերբն կազմակերպութիւնը, կամ աւելի ճիշդը, Տէլչէֆ վարժապետը, որ անոր հպին է, Ալբրիլ տասներեքին, զազանի սեղմը, հասանականօրէն Մանասթըրի լեաներուն մէջ, ժողովի կանչած է մակեդոնական շարժումին բոլոր ներկայացուցիչները. նաեւ բոլոր հրոստիմբերուն պետները, Սարաֆօֆ, ևն: Հոն ու այն օրը վճռուած է ապստամբութիւնը հետեւեալ բանաձեւով:

«Կամ պիտի քաշալինք մեր լեաներուն ու

մեր ձորերուն մէջ և կամ պիտի իյնանք թուրքերուն լուծին աակ, սր մեր վրայ կը ճնշէ զարեքէ ի վեր նաասացուցիչ կերպով, պիտի կուսինք բնութան ունենալով «Ազատութիւն կամ մահ»:

Այս բողոքով բոլոր ներկաներէն նաւարդուած, հաղորդուեցաւ շուտով թղթատարներու ձեռով, զիւղերու ձերբերուն ու զիւղապետներու խմբապետներուն, վազեմի սպաներուն, նաեւ Սելանիկ և Կ. Պոլիս:

Ապստամբութիւնը սկսած է ազդէն Մուսթաֆա բաշայի կամարջի զէտքէն ի վեր. յետոյ սկսան ամենօրեայ կոխներն և ընդհարումները Թիւրքի մինչև Օթտոմանի լիճը, Սելանիկի մէջ աւելի պայծառ կերպով յայտնուեցաւ:

Շուտով պիտի ծաւալի Կ. Պոլսոյ մէջ և մինչև Սուլթանին պալատին զոնները, պիտի վերջանայ Մանասթըրի մէջ ջարդերով, որոնք պիտի արժնցնեն քաղաքակրթուած աշխարհին խղճմտանքը:

—Ալբանիացի խօճակները. Օտտոմանականութիւնները քսան ալբանիացի խօճակներ ձեռքակալեցին իբրեւ խռովարարներ:

—Իւսպանները. Փրանսական, անգլիական ու զերմանական զեսպանները Դրան իմացուցին որ իրենց կը վերապահին սուղանք պահանջել իրենց ազգայիններուն համար, որոնք վաստուեցան Սելանիկի արիւնաւոր զէտքերէն, Դուր պատասխանատու բռնելով այս զէտքերու հետեւանքներուն:

—Կ. Պոլիս. Մեծ թիւով Պոլիարներ ձերբակալուեցան:

—Սելանիկ. Նոր փորձ մեղած է նաւակատանց ու հեռազրատանց շէնքին վրայ. պոլիար երիտասարդ մը ուսմբեր կրելով հոն կը մանր, ձերբակալուեցաւ ու անմիջապէս սպաննուեցաւ:

—Թուրք խուժանը. Սելանիկի զէտքերուն մէջ, առեւ մը ցիչ մնաց սր երեսուն հազար թիւով թուրքեր տասը հազար Պոլիարներու վրայ խուժէին: Այս անգամուսան համար անանկ բան մը չը պատահեցաւ, որովհետեւ Մակեդոնացիները մաւ-

նաւորապէս յարձակեցան ո՛չ թէ թուրքերուն այլ օսա՛ր ազգերուն ու հրեաներուն վրայ, որոնք քաղքին բնակչութեան կէտը կը կազմեն :

— **Թուրք զօրքերը.** Մակեդոնացիները աչքերնին առած էին ամեն բան, ուսմբեր կը նետեն, եթէ գէշ պայթի ուսմբը, առաջ իրենք կը սպաննուին : Այն ատեն, պայթումները կը պատկուին քաղքին միւս մասերուն մէջ, գերմանական զպրօցը, կաթոլիկ եկեղեցին, են :

Պայթումները մինչեւ կ'էս զիշերէն ետքը սենեցին. յետոյ, քաղքին մէջ փողոցները նոր կոխներ անդի ունեցան : Թուրք զօրքերը գործեցին ահռելի խժոճութիւններ նոյն խակ հանդարտ բնակիչներուն վրայ, որոնք տուներին քաշուած փակուած էին, Մակեդոնացիները, միւս կողմէ, իրենք զիրենք յուսահատօրէն պաշտպանեցին :

Յաջորդ ատուան, պայթումի նոր փորձեր կրկնուեցան. ահռելի էր մանաւանդ Օսմ. զրամատան մօտիկ տնակի մը մէջ պարզուած սևաբանը : Ժօրժ անուն մէկը, ռազմական անունովը խորան, հոն հաստատած էր ուսմբերու գործարան մը, իտալացի պատա. կնոջ մը քով կ'ապրէր տարիէ մի վեր, ինքզինք Սերպ կը ցոցընէր, թուրքերէն ու փրանսերէն կը խօսէր, Շէս կը գնէր : Պուլիար սպայ մը կամ վարժարան մըն էր թերևս. բայց կը կարծուէր թէ զլուստր գործողներէն մէկն էր ինք : Պատաւ կնոջմէն կը մատնուի, երեսուն մարդերէ թուրք շոկատ մը տունը կը պաշարէ ճիշդ այն պահան որ Ժօրժ իր երեք բնկերներով հոն կը պահաւորուէր : Դիմազրութիւնը զուցազներգական եղաւ, Ժօրժ տանիքի մը վրայէն ուսմբեր նետեց գորքերուն վրայ, մինչդեռ իր բարեկամները սկզբովէն կը կոչանային շոկատին վրայ : Երկար ատեն հրացան սարսուղեցաւ, ի վերջոյ Ժօրժ վիրաւորուած, գնասկ մը պարպելով իր գլխուն, պոռաց. «Ազատութիւն կամ մահ» : Ինքն մըն աչ նոյնն քրտ, ըսելով. «Այսպէս կը մեռնին Պուլիարները» : Միւս երկուքը շարունակեցին կռիւը տանիքներուն բարձրէն, սակից վար ինկան ի վերջոյ, գնասկներէն ծակկուած :

— **Մարտանաւերը.** Դուռը մայիս տասնին խնդրեց տէրութիւններէն որ Ալլանիկի նաւահանդիստէն ետ քաշեն իրենց նաւատորմիդները, որովհետեւ բնակիչները (թուրք) գէշ կը մեկնեն անոնց ներկայութիւնը :

— **Ջարդ.** Մանասթըրի մահճաստանները կատարելով որ Պուլիարները ուսմբեր նետեցին մկիթներուն մէջ, քրիստոնեաներուն վրայ խուժեցին ու սոսկալի Ջարդ մը ստուին : Քաղաքը սարսափի մէջ է, քրիստոնեաներուն առններն ու խանութները գոց կը մնան դեռ :

— **Ֆերսիմուսէ իշխանը.** Բարիպի մէջ մայիսի տասնը մէկին, Ֆերտիմուս իշխանը պաշտօնապէս յայտարարած է որ Պուլիարիան երբէք չընդունիր պատասխանատուութիւն մը Մակեդոնիոյ խանսկութեանց ու Ալլանիկի արինահնգութեանց համար :

Իշխանը յայտարարած է նաև թէ Պուլիարիան թեալիոյ Յոյներուն պէս ինքզինք վտանգի պիտի չ'ենթարկէ, երբ որ պատերազմի բնուի թուրքիոյ հետ :

— **Բ. Դրան ծանուցագիրը.** Դուռը վերջապէս ետ առած է Պուլիարիոյ սզգած իր ծանուցագիրը, որուն կծու լեզուն փոխելը խոհեմութիւն համարած է :

**ԼԱՅ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ**

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ  
Լողան, Զուկերիա  
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Արեւելեան կամ հայկական կրթատունը կ'ընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առևարական կամ արհեստագիտական առողջ ու հիմնաւոր կրթութիւն մը, ներդաշնակօրէն միացած սզգային հիմնական դաստիարակութեան մը հետ : Մեր հայ աշակերտներուն կ'աւանդենք, և այս առանց ու եր է վճարումի՛ հայերէն լեզու, հայ. պատմութիւն, հայ. մասնագրութեան պատմութիւն, են :

Արեւելեան կրթատան սարքածաղիը, հսկողակ իր ընծայած բազմաթիւ իրակամ առաւելութիւններուն, անմրցելի կերպով շափար է :

Հայ ծնողներու համար մասնաւոր պայմաններ : Բնատնական կեանք :

Կրթատանս յայտագիրն ամեն ուզողի կը ղրկուի :

ՏՆՕՐԷՆ Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ  
Տըքթ. ի Գիտութիւնս

Համալսարանական մասնա. որ Պոստօլի

# ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴՅԳՐՈՒԹԻՒՆ ՓԻՒՆԻԿ

ԱՍՆԵՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻՆ

Որ կ'սխի այս տարուան Յուլիան հրա-  
տարակալի Աղեքսանդրիա, նոյն ուղղու-  
թեամբ և հարուստ պարունակութեամբ:

Ամենօրեայ Փիւնիկի խմբագիր-Տնօ-  
րէն է ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ, որուն պի-  
տի աշխատակցին երկու օգնական-խմբա-  
գիրներ ու մէկէ աւելի թղթակիցներ:

## ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ամենօրեայ Փիւնիկը, ըլլալով ժողո-  
վրդային հրատարակութիւն մը, և նպա-  
տակ ունենալով քաջալիքի յառաջդիմակեր-  
բիտասարգութեան շարժումները, առ այժմ  
ասոնց համար մանուկներ սրբակ մը կը յառ-  
կացնէ, որ պիտի կրնան երեւիլ մանուկնոց  
նորահաս զբոսներու յօդուածներ, հոգ չէ  
թէ ասոնք կոչուածով ու պաշտօնով խմբա-  
գիրներ յորովայնէ ընտրուելու չ'ըլլան, եկամ  
նորոգագրութեան վրա ալ մեղանչին: Խրմ-  
բագրութիւնը, իրեն վերապահելով ո' և է  
զրութիւն կոկիկու իրաւունքը, յօժարակամ  
պիտի հրատարակէ յօդուածներ, թղթակի-  
ցութիւններ, բաւական է որ հանրութեան  
օգտաբեր, ժողովուրդը լուսաւորող գաղա-  
փարներ բերեն անոնք:

Ամենօրեայ Փիւնիկը, ըլլալով ան-  
կասն ու միանգամայն ազատական թերթ  
մը, պիտի ջանայ մնալ միեւնոյն բարձրու-  
թեանը վրայ, շարունակելով անաչտօրէն  
քննադատել հանրային գործերն ու խայ-  
տատակել զեղծումները, առանց խնայելու  
այս կամ այն կուսակցութեան, ազգ. լշխա-  
նութեան, ևն.:

## ԾՐԱԳԻՐ

1.— Կը պարունակէ ամեն օրուան  
հեռագիրները, քաղաքական, ազգային, տե-  
կան, առևտրական, ևն. ևն առատ, ու  
թարմ լուրեր:

2.— Անպակաս կ'ունենայ անաչտօր-  
դոյ յօդուած մը, ազգային թէ քաղաքա-  
կան, զրական թէ գիտական նիւթի վրայ:

3 ԹԵՐԹՈՆԸ պիտի յատկացուի բա-  
նասիրականին, որուն մէջ պիտի երեւին:

Ա.— Ձերունակակնք. ամբողջ, այն է  
ինքն հարիւր տարուան պատմութեան մեծ  
անցքերը, ցեղախումբերուն հետ լեռնցիներ:

րուն ընդհարումները, հերոսական արշաւանք-  
ները, պատերազմները, ևն, ևն, ամբողջը  
վէպի ձևով:

Բ. Ձերունի սովորութիւնները, բարքերը,  
գաւառաբարբառը, աւանդութիւնները, լեռ-  
նական կեանքը, ևն:

Գ. Հայկ. Հարցի վրայ սկիզբէն մին-  
չեւ մեր օրերը լոյս տեսած թեր ու վէժ  
հրատարակութեանց— բնականաբար զեւա-  
նագէտներու, ընկերաբաններու, ճամբորդ-  
ներու հեղինակութիւններ— նաեւ այս վեր-  
ջին քառորդ տարու շրջանին, Երոսայի  
զանազան կեդրոնները սարքուած հաւաքոյթ-  
ներու մէջ լսուած բանախօսութեանց թարգ-  
մանութիւնները, Կրտսթոնի ճառերէն ըս-  
կըսեալ մինչեւ Տիգրան Երկաթիները:

Դ. ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ կենսագրութիւ-  
նը, մեռչեւ որ աւարտի:

Եգիպտահայ մեծ մարգերուն կենսագրու-  
թիւնը:

Ե. Գիտութեան աշխարհին մէջ երեւցած  
ամեն նորութիւն, զիւս, բեւեռախոյզ ու  
երկրախոյզ գիտուններուն ծանօթագրու-  
թիւնները, ևն:

Ամենօրեայ Փիւնիկին Չորրորդ էջը  
պիտի գրաւեն ծանուցումներ, յայտա-  
բարութիւններ, հայ թէ օտար վաճառա,  
տանց, արհեստաւորներու, շոգեհաւային  
երկաթուղեաց ընկերութեանց ժամանակա-  
ցոյց ու սակագին, պարզեւաւոր վիճակա-  
հանութեանց ցուցակը, սակարանին ելեւէջ-  
ները, ևն. ևն:

## ՊԱՅՄԱՆՔ

Բաժանորդագրութիւնը կը սկսի ամեն ամ-  
սոյ սկիզբէն և կ'էսէն:

Չեւքէ կը ծախուի հատը հինգ միլիէմի:

ԵՌԱՄՄ • ՎԵՏԱՄՄ • ՏԱՐԵԿ •

Եգիպտոս զրշ.	30	60	120
Աքտասահման ֆր.	10	20	40
Ամերիկա տօլար	2	4	8
Լեովկաս ոուրլի	4	8	16

Փրանսերէնի, տաճկերէնի ևւ տօ-  
մարակալութեան հմուտ երկտասարդ  
մը պատրաստ է պաշտօնավարել վա-  
ճառատան մէջ: Արտասահման ալ  
կերթայ գոհացուցիչ աշայմաններով,  
զիմել խմբագրատունը:

